ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԾՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Խաղաղութեան ձայն հնչեցաւ»:

Քրիստոնյա աշխարհն ամբողջ և ժողովուրդները բոլոր մի անգամ ևս ցնծությամբ ընդունում են մեծ ավետիսը մեր Փրկչի՝ Քրիստոսի ծննդյան և լսում երկնառաք ձայնը խաղաղության:

Խաղաղություն համայն մարդկության, խաղաղություն բոլոր ազգերին· Խաղաղություն հեռավորաց և մերձավորաց:

Սուրբ Ծննդյան տոների սեմին մեր ժողովուրդի բոլոր զավակներին անխտիր տալիս ենք Մեր հայրապետական օրհնությունը և մաղթում նրանց եղբայրության ու համերաշխ գործակցության ոգի, որոնք գրավականներն են իրավ խաղաղության՝ անհատական, ընտանեկան թե եկեղեցական-ազգային կյանքի մեջ:

Սուրբ Ծննդյան շնորհներով թող է՛լ ավելի հառագայթեն ու աճեն սերն ու խաղաղ աշխատանքի պտուղները նաև ձեր պատմական Աթոռից ներս, ձեր զինվորյալ միաբանության ու հավատացյալ ժողովրդի կյանքում՝ Ձերդ սրբազնության հոգեշեն առաջնորդության ներքո:

Սուրբգրական Մայր Հայաստանից և քրիստոսապարգև սուրբ Էջմիածնից ձեզ բոլորիդ ողջույն և օրհնություն և շնորհավոր Նոր տարի և սուրբ Ծնունդ և Աստվածահայտնություն Տյառն մերո Հիսուսի Քրիստոսի, որ է օրհնյալ այժմ և հավիտյան. ամեն:

Եղբայրական սիրով ու քրիստոսավանդ ողջունիվ՝

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

*
* *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: